



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻՆԱԶՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

17 հուլիսի 2020 թվականի թիվ 65-Ա

ք. Երևան

«ԲԵԴԼԱՅՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումների հիման վրա 2020 թվականի հունիսի 11-ին հարուցված թիվ 6 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

«ԱՍԵԴԻԱ» ՍՊ, «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵԲԹ» ՍՊ և «ՅՈՒԲՈՍ» ՓԲ ընկերությունները (այսուհետ՝ Իրավատերեր) 2020 թվականի հունիսի 11-ին և 12-ին Հանձնաժողով մուտքագրված իրենց դիմումներում հայտնում են, որ հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող «ԲԵԴԼԱՅՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից առանց պայմանագրային հիմունքների իրականացվում է հեռուստաձրագրերի վերահեռարձակում, որոնց քաղաքացիկ պաշտոնական ներկայացուցիչները Հայաստանի Հանրապետությունում վերապահված է Իրավատերերին:

«ԱՍԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը իր դիմումում հայտնում է, որ առաջարկել է Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոձրագրերի վերահեռարձակում իրականացնող ընկերություններին իր հետ կնքել հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագիր: Ավելին, ըստ Իրավատիրոջ՝ Ընկերությունը իրազեկված լինելով օրենսդրական այն պահանջի մասին, որ առանց համապատասխան պայմանագրի իրավունք չունի իրականացնել հեռուստաալիքների վերահեռարձակում, սակայն առանց հեռուստաձրագրերի վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագրի կնքելու շարունակում է «НТВ мир», «НТВ» «Т 24», «Наука», «Мульт», «Мама», «Моя Планета», «История», «НСТВ», «Охотник и Рыболов» հեռուստաալիքների վերահեռարձակումը:

«ՎԻ ԷՍ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությունն իր դիմումում նույնպես հայտնում է, որ առաջարկել է Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոձրագրերի վերահեռարձակում իրականացնող ընկերություններին իր հետ կնքել հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագիր, սակայն Ընկերությունն առանց հեռուստաձրագրերի վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագիր կնքելու շարունակում է մինչ օրս «PTP-ПЛАНЕТА», «РОССИЯ- КУЛЬТУРА», «РОССИЯ-24», «Discovery Channel», «Animal Planet», «Discovery Science», «DTX», «ID XTRA», «TLC», «EUROSPORT 1», «EUROSPORT 2» հեռուստաալիքների վերահեռարձակումը:

«ՅՈՒՔՈՍ» ՓԲ ընկերությունը իր դիմումում ևս հայտնում է, որ Ընկերության կողմից TNT4 International (TNT4 Интернэшнл), THT Comedy (THT Комеди), Friday International (ПЯТНИЦА Интернэшнл), TV-3 International (ТВ-3 Интернэшнл), Центральное Телевидение, ТВЦ international հեռուստաալիքները վերահեռարձակվում են առանց համապատասխան փաստաթղթերի և պայմանագրերի՝ խախտելով Իրավատիրոջ հեղինակային և հարակից իրավունքները:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով՝ 2020 թվականի հունիսի 11-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2020 թվականի հունիսի 15-ին ծանուցել է Ընկերությանը և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները և իրավական հիմքերը:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրությունում Ընկերությունը հայտնել է, որ Երևան քաղաքում հեռուստահաղորդումների կաբելային հեռարձակում դեռևս իրականացրել է Հանձնաժողովի կողմից 20.03.2010թ-ին «ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊ ընկերությանը տրված թիվ 137 լիցենզիայի հիման վրա և լիցենզիայի գործողության ժամկետ էր սահմանվել մինչև 20.03.2020թ-ը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ «ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊ ընկերությունը ունեցել է պայմանագրեր «ՎԻ ԷՍ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ և «ԱՍԵԴԻԱ» ՍՊ ընկերությունների հետ 2016-2019թթ.-ին և նշված պայմանագրերի ժամկետն ավարտվել է 2019թ-ի դեկտեմբերի 31-ին և քանի որ «ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊ ընկերությանը տրված լիցենզիայի գործողության ժամկետը մինչև 20.03.2020թ-ն էր, ուստի նրանց հետ պայմանագրերը չեն վերակնքվել:

Ընկերությունը («ԲԵԴԼԱՅՆ» ՍՊ ընկերությունը չի հանդիսանում «ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊ ընկերության իրավահաջորդը) դիմել է Հանձնաժողով հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու համար և Հանձնաժողովի կողմից 2020 թվականի մարտի 20-ին Ընկերությանը տրվել է հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման թիվ ԿՀ 276 լիցենզիան (սփոման տարածքը՝ քաղաք Երևան, լիցենզիայի գործողության ժամկետը՝ 21.03.2020թ. առ 21.03.2030թ.):

Ընկերության բացատրության մեջ նշված է, քանի որ 2019թ-ի դեկտեմբերի 31-ին «ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագրերի ժամկետն ավարտվել էր, ուստի որպես «ԲԵԴԼԱՅՆ» ՍՊ ընկերության տնօրեն նաբազմիցս խոսել է «ԱՍԵԴԻԱ» ՍՊ և «ՎԻ ԷՍ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությունների տնօրենների հետ և նրանց առաջարկել

է կնքել նոր պայմանագրեր, սակայն նրանք ամեն անգամ ձգձգել են պայմանագրի կնքումը և մինչև օրս Ընկերության և Իրավատերերի միջև պայմանագիր չի կնքվել: Գրավոր բացատրությունում պարզաբանված այլ հարցերը Իրավատերերից «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ և «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունների հետ կապված, տվյալ վարչական վարույթի շրջանակներից դուրս են և հետևաբար դրանց անդրադարձ չի կատարվում:

Գրավոր բացատրությունում Ընկերության տնօրենը տեղեկացրել է նաև, որ «ՅՈՒԲՈՄ» ՓԲ ընկերության հետ երբևէ պայմանագրային պարտավորություններ չեն եղել, հետևապես «ՅՈՒԲՈՄ» ՓԲ ընկերության կողմից մատնանշված հեռուստաալիքները Ընկերության կողմից երբևէ չեն վերահեռարձակվել, ուստի ներկայացված դիմումն անհիմն է:

Ընկերության բացատրության մեջ նշվում է նաև, որ ըստ էության նշված հեռուստաալիքներից Ընկերությունը հեռարձակել է 2 հեռուստաալիք՝ «Охотник и Рыболов» և «Шансон-ТВ»-ն:

Ընկերությունը գտնում է, քանի որ Իրավատերերի հետ չունի որևէ պայմանագրային պարտավորություններ և վերջիններս հրաժարվում են պայմանագրեր կնքել իր հետ, հետևաբար խնդրում է Հանձնաժողովին Իրավատերերի ներկայացված դիմումները ճանաչել ոչ իրավաչափ և դրանք մերժել՝ անհիմն լինելու պատճառով:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և 45.1-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի հեռուստատառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ կաբելային (մալուխային) հեռուստատառադիոհեռարձակման դեպքում նաև հեռուստատառադիոընկերությունում տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2020 թվականի հուլիսի 01-ի թիվ 19-Ա հրամանը՝ իրականացրել է Ընկերությունում մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Ընկերությունում տեղում դիտարկման արդյունքներով Հանձնաժողովի ներկայացուցիչը 2020 թվականի հուլիսի 02-ին կազմել է մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրություն, համաձայն որի Ընկերության կողմից վերահեռարձակվում են Natura, Че, Кино, Song TV, Fine Living, Euronews, ОПТ, ЗЖ, ТНТ, Мужское кино, Кинопреьера, Кинохит, Оружие, РЕН ТВ, Հ1, Հ2, Շանթ, Кинокомедия, Чենупրն, Индейское кино, Арена, Игра, Ա-Թի-ՎԻ, Звезда, Мир, Домашний, СТС, Минор, Россия культура, 5-րդ ալիք, Natura Geografic, Ru TV, Кухня ТВ, Диалоги о рыбалке, Карусель, Dysney, Nickelogeon, 8-օй канал, МТВ, Матч, Мужской, Русский роман, Матчпремьер, Ար, Արմյուզ, Շոդակաթ, Երկիր մեդիա, Նոր Հայաստան հեռուստաալիքները: Ընկերության կողմից վերահեռարձակվող հեռուստաձրագրերի ցանկում բացակայում են Իրավատերերի դիմումներում նշված հեռուստաձրագրերը, բացառությամբ «Ռուսիա Կուլտուրա» («РОССИЯ-КУЛЬТУРА») հեռուստաձրագրի: Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունը ստորագրել են Հանձնաժողովի և Ընկերության ներկայացուցիչները, ընդ որում Ընկերության ներկայացուցիչը՝ տնօրենը, ստորագրել է արձանագրությունը առանց որևէ առարկության կամ բացատրության:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի իրականացրած տեղում դիտարկման արդյունքների հետ և արդյունքում հայտնի է դարձել, որ մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմելու օրվա դրությամբ Ընկերությունը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով որևէ հեռուստաալիքի վերահեռարձակման իրավունք չի ունեցել, հետևաբար Ընկերության կողմից իրականացվում է ոչ սեփական հեռուստադրագրերի վերահեռարձակում՝ առանց Հանձնաժողովի թույլտվության, դրանով իսկ խախտելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռքբերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է Ընկերության կողմից իրականացված իրավախախտում, այն է՝ առանց Հանձնաժողովի թույլտվության ոչ սեփական հեռուստադրագրի վերահեռարձակման իրականացում:

Նշված արարքը համապատասխանում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի և 60-րդ հոդվածի 6-րդ մասի հատկանիշներին:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

ոչ սեփական հեռուստառադիո հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված հեռուստառադիո-ընկերություններն օտարերկրյա հեռուստառադիո ընկերությունների ծրագրերը կարող են վերահեռարձակել պայմանագրային հիմունքներով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով հեռուստառադիո հեռարձակում իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող ընկերությունների հեռուստառադիո ծրագրերը հեռուստառադիո ծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահեռարձակվել միայն Հանձնաժողովի թույլտվության հիման վրա:

Թույլտվությունը տրվում է, կամ դիմումը մերժվում է վերահեռարձակում իրականացնելու համար Հանձնաժողովին դիմելուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում Հանձնաժողովը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ առանց Հանձնաժողովին տեղեկացնելու վերահեռարձակում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ԲԵԴԼԱՅՆ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Վ. ՕՀԱՆՅԱՆ

17 հուլիսի 2020թ.

ք. Երևան